ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/2

ք. Երևան

02.08.2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Սեյսմանախագիծ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Հայրապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում>> աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան և կատարման վերջնաժամկետ է սահմանվում 15.11.2017 թ.:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը Պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 18990000 (տասնութ միլիոն ինը հարյուր իննսուն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենքդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Մինչև 05.12.2017թ. պայմանագրի չիրացված մնացորդային գումարն ամբողջությամբ՝ համապատասխան կանխավճարի ապահովում ներկայացնելուց հետո, Պատվիրատուն առնվազն 15.12.2017թ.փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Կատարողը իրավունք ունի պայմանագրով իրեն վերապահված գործառույթների կամ դրանց մի մասի իրականացումը սահմանված կարգով լիազորել այլ անձի:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու՝	Կ ա պ ա լ ա ռ ո ւ՝
ՀՀ կառավարությանն առընթեր	**<<Սեյսմանախագիծ>> ՍՊԸ**
քաղաքաշինության պետական կոմիտե	ք. Երևան, Բաբաջանյան 63, բն.3
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	<<ԿՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ
կառավարական տուն 3	թիվ 2 մասնաճյուղ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 160630001073
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01839944
Հ/Հ 900011011765	
ՀՎՀՀ 02565827	

Աշխատակազմի ղեկավար՝

_____

(ստորագրություն)

Տնօրեն՝

_____ Ռ. Հայրապետյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
.08.2017 թ. կնքված
N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁՊ-17/2
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում» ծրագրի աշխատանքների

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
						կատարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	71631140/1	ՀՀ դրամ	18990000	18990000	1	ք. Երևան և ՀՀ մարզեր	15.11.2017 թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում» ծրագրի աշխատանքների

1	***Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը***	«Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2017 թվականի ընթացքում իրականացնել Երևան քաղաքում և ՀՀ մարզերի բնակավայրերում առաջնահերթ հետազոտության ենթակա թվով 64 տարբեր նշանակության շենքերի փաստացի տեխնիկական վիճակի մանրամասն հետազոտություններ (դիտողագործիքային եղանակով): Հետազոտության արդյունքների հիման վրա պետք է կազմել շենքերի վերակառուցման, վերականգնման, սեյսմազինվածության բարձրացման, ուժեղացման համար հիմք հանդիսացող համապատասխան «Եզրակացություններ» և «Տեխնիկական անձնագրեր» (վկայագիր): Շենքերի ցանկը ներկայացված է կից հավելվածով:

2	*Աշխատանքների իրականացման հիմնավորումը և պահանջները*	***Հիմնավորում*** «Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում» ծրագիրը իրականացվում է ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի պատվերով՝ համաձայն - «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, - «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, - «Գնումների մասին» ՀՀ օրենքի, - «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, - ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1313-Ն որոշման, - ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի մարտի 3-ի «Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում ծրագրով նախատեսված 2017 թվականին իրականացվելիք միջոցառումները հաստատելու մասին» N 30-Ա հրամանի: ***Նորմատիվ պահանջներ*** - ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմեր, - ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» շինարարական նորմեր, - Շինարարական կոնստրուկցիաների նախագծման և շահագործման վերաբերյալ գործող նորմատիվ փաստաթղթեր, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի N 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումներ», - ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» N 1161-Ն որոշում, - ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտություններ ու անձնագրավորում (վկայագրավորում) իրականացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի հոկտեմբերի 30-ի N 346 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 274-Ն որոշում:
3	***Շենքերի տեխնիկական վիճակի մասին «Եզրակացությունների» և «Տեխնիկական անձնագրերի» (վկայագիր) բովանդակությանը, կառուցվածքին, շարադրանքին և ձևավորմանը ներկայացվող պահանջներ***	Շենքերի տեխնիկական վիճակի մասին «Եզրակացությունների» և «Տեխնիկական անձնագրերի» բովանդակությունը, կառուցվածքը, շարադրանքը և ձևավորումն պետք է ապահովել ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերի դրույթներին և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի N 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումներին» համապատասխան:

4	*Այլ պահանջներ*	➢ Շենքերի տեխնիկական վիճակի հետազննության արդյունքների վերաբերյալ եզրակացության տրամադրում՝ «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումների» Հավելված 1-Բ ձևաչափին համապատասխան, իսկ տեխնիկական անձնագրերը՝ Հավելված 2-Բ ձևաչափին համապատասխան: ➢ Աշխատանքը (հաստատված «Եզրակացությունները» և «Տեխնիկական անձնագրերը) պատվիրատուին են հանձնվում երեք օրինակից՝ հայերեն լեզվով թղթային տեսքով և մեկ էլեկտրոնային կրիչով: ➢ Աշխատանքն ամբողջությամբ նախատեսվում է իրականացնել 2017 թվականներին՝ գնման ժամանակացույցին համապատասխան: ➢ Աշխատանքների սկիզբը հաշվարկվում է պայմանագրի կնքման օրվանից: ➢ Աշխատանքների ավարտը՝ Աշխատանքնի արդյունքը և ամփոփ հաշվետվությունը պատվիրատուին ներկայացնելու վերջնաժամկետը, սահմանվում է 2017 թվականի նոյեմբերի 15-ը:

Պ ա տ վ ի ր ա տ ու՝
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011765
ՀՎՀՀ 02565827

Կ ա պ ա լ ա ռ ո ւ՝
<<Սեյսմանախագիծ>> ՍՊԸ
ք. Երևան, Բաբաջանյան 63, բն.3
<<ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ
թիվ 2 մասնաճյուղ
Հ/Հ 160630001073
ՀՎՀՀ 01839944

Աշխատակազմի ղեկավար՝

(ստորագրություն) Ա. Մելքոնյան

Տնօրեն՝

(ստորագրություն) Ռ. Հայրապետյան

Կ.Տ.

Կ.Տ.

Հավելված
«Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում» ծրագրի աշխատանքների տեխնիկական բնութագրի

ՑԱՆԿ

Տեխնիկական վիճակի հետազոտության և տեխնիկական անձնագրավորման ենթակա շենքերի

h/h	Շենքի հասցեն, նշանակությունը
	Ք. Երևան
	Աջափնյակ վարչական շրջան, Արզումանյան փողոց 5, Ալեքսանդր Բլոկի անվան հ.122 հիմնական դպրոց
	Արաբկիր վարչական շրջան, Նաիրի Զարյան փողոց 23, Վարդգես Պետրոսյանի անվան հ.51 հիմնական դպրոց
	Արաբկիր վարչական շրջան, Հակոբ Հակոբյան փողոց, նրբանցք 3, Նաիրի Զարյանի անվան հ.130 հիմնական դպրոց
	Էրեբունի վարչական շրջան, Սասունցի Դավիթ փողոց 2, Հակոբ Կարապետյանի անվան հ.6 հիմնական դպրոց
	Էրեբունի վարչական շրջան, Նոր Արեշ 8-րդ փողոց 56, Մուշեղ Մխոյանի անվան հ.68 դպրոց
	Կենտրոն վարչական շրջան, Մաշտոցի պողոտա 2ա, «Հակոբ Կոջոյան» հ.15 կրթահամալիր
	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Դրոյի փողոց 11, Միսաք Մանուշյանի անվան հ.48 հիմնական դպրոց
	Կենտրոն վարչական շրջան, Մոսկովյան 40, Հովհաննես Թումանյանի թանգարան
	Կենտրոն վարչական շրջան, Պուշկինի 70, Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ Ա. Սարգսյանի և Հ. Կոջոյանի տուն-թանգարան
0	Կենտրոն վարչական շրջան, Աբովյան փող., 7, Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն
1	Շենգավիթ վարչական շրջան, Բագրատունյաց 48, «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ

	ՀՀ Արագածոտնի մարզ
	գ.Արագածավան համայնք, Երկաթուղայիների թաղամաս 13/1, բազմաբնակարան
	Հնաբերդ համայնք, 7փողոց 1/1, դպրոց
	գ.Արագած, 8-րդ փողոցի 4/2, մանկապարտեզ և արվեստի դպրոց
	ՀՀ Արարատի մարզ
	գ. Սիս, բազմաբնակարան
	ք.Վեդի, ծնդատուն
	գ. Ուրցաձոր, դպրոց
	ք. Մասիս, հ. 4 հիմնական դպրոց
	գ. Նշավան, մանկապարտեզ
	ՀՀ Արամավիրի մարզ
	ք.Էջմիածին, Զվարթնոց թաղամաս հ. 4, բազմաբնակարան
	ք.Էջմիածին, հ. 9 հիմնական դպրոց
	ք.Արմավիր, 23 փողոց թիվ 1, բազմաբնակարան
	ք.Արմավիրի հ. 6 հիմնական դպրոց
	գ.Ակնաշեն, մանկապարտեզ
	ՀՀ Գեղարքունիքի մարզ
	ք.Մարտունի, Մյասնիկյան 22, բազմաբնակարան
	ք.Վարդենիս, Երտասարդության 11, բազմաբնակարան
	ք. Գավառ, Զորավար Անդրանիկի 52, մշակույթի տուն
	գ.Նորատուս, Գր.Լուսավորչի 51, Ա.Սողոմոնյանի անվ. Հ. 2 միջն. դպրոց
	ք. Ճամբարակ, Պ.Սևակի 96, հ. 1 միջն. դպրոց
	ՀՀ Լոռու մարզ
	ք. Վանաձոր, Ավետիսյան 55,57,59, բազմաբնակարան
	ք. Ալավերդի, Դեբեդ 4, բազմաբնակարան
	ք. Վանաձոր, Վ.Համբարձումյան թիվ 2, Վանաձորի Վ. Համբար-ձումյանի անվան N25 հիմնական դպրոց
	ք.Ալավերդի, Ջրավազանի 6ա, Ալավերդու Հովհաննես Թումանյանի անվան N2 հիմնական դպրոց
	Ք. Վանաձոր, Սուխումի 5, նախկին մանկապարտեզի մասնաշենք, այժմ՝ մարզադպրոց
	ք.Վանաձոր, Մյասնիկյան 17, Առողջապահական (առաջնային բուժօգնություն և

	սպասարկում, լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների իրականացում)
	ք. Վանաձոր. Ուսանողական 6, մշակույթի տուն
	ՀՀ Կոտայքի մարզ
	ք.Աբովյան, Հանրապետության 3, հանրակացարան
	ք.Աբովյան Հանրապետության 7, հանրակացարան
	գ.Արամուս, դպրոց
	գ. Կամարիս, դպրոց
	ՀՀ Շիրակի մարզ
	ք. Գյումրի, Իսահակյան փ. 9, բազմաբնակարան
	ք. Գյումրի, Տիգրան Մեծի փ. 5, բազմաբնակարան
	ք. Գյումրի, Տիգրան Մեծի փ. 8ա, բազմաբնակարան, (I,III մասնաշենքեր)
	գ. Կապս, միջնակարգ դպրոց
	գ. Հովունի, միջնակարգ դպրոց
	գ. Երազգավորս, մշակուկույթի տուն
	ք. Արթիկ, «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ
	ք. Արթիկ, քաղաքային մարզադաշտ
	ՀՀ Սյունիքի մարզ
	ք. Կապան, Շինարարների փողոց 20, բազմաբնակարան
	ք. Կապան, Շինարարների փողոց 9, բազմաբնակարան
	ք. Կապան, Շինարարների 19, Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց
	ք. Մեղրի, Աբելյան 3, մշակույթի պալատ
	Տաթև համայնքի Հարժիս բնակավայրի միջնակարգ դպրոց
	ՀՀ Վայոց ձորի մարզ
	ք.Ջերմուկ, Ձախափնյակ 5, բազմաբնակարան
	ք.Եղեգնաձոր, թիվ 1 մանկապարտեզ
	գ.Մարտիրոս, միջնակարգ դպրոց
	գ.Չիվա, միջնակարգ դպրոց
	ՀՀ Տավուշի մարզ
	ք. Իջևան, Մայիսի 28 փողոց 41, բազմաբնակարան
	ք. Դիլիջան, Կալինինի փողոց 175, բազմաբնակարան
	ք. Իջևան, Անկախության 15, մարզական

	գ. Ազատամուտ, Կ.Թիրաքյանի փողոց 15, բազմաբնակարան
	գ. Սևքար, դպրոց
	գ. Վազաշեն, դպրոց
	գ. Սարիգյուղ, մշակույթի տուն

Պ ա տ վ ի ր ա տ ու՝

ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011765
ՀՎՀՀ 02565827

Կ ա պ ա լ ա ռ ո ւ՝

<<Սեյսմանախագիծ>> ՍՊԸ
ք. Երևան, Բաբաջանյան 63, բն.3
<<ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ
թիվ 2 մասնաճյուղ
Հ/Հ 160630001073
ՀՎՀՀ 01839944

Աշխատակազմի ղեկավար՝

(ստորագրություն) Հ. Մկրտչյան

Կ.Տ.

Տնօրեն՝

(ստորագրություն) Ռ. Հայրապետյան

Կ.Տ.

Հավելված N 2
02.08.2017 թ. կնքված
N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/2
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 04, խումբ 08, դաս 04, ծրագիր 03)

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71631140/1	Շենքերի տեխնիկական վիճակի հետազննությունների և տեխնիկական անձնագրավորման աշխատանքներ	-	-	-	-	-	-		14337450	14337450	18990000	18990000	18990000	1899000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Պ ա տ վ ի ր ա տ ու՝
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011765
ՀՎՀՀ 02565827

Կ ա պ ա լ ա ռ ո ւ՝
<<Սեյսմանախագիծ>> ՍՊԸ
ք. Երևան, Բաբաջանյան 63, բն.3
<<ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ
թիվ 2 մասնաճյուղ
Հ/Հ 160630001073
ՀՎՀՀ 01839944

Աշխատակազմի ղեկավար՝

.... Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Տնօրեն՝

.... Ի. Հայրապետյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
02.08.2017 թ. կնքված
N ՀՀԲՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/2
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
02.08.2017 թ. կնքված
N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/2
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

02.08.2017 թ.

<<Սեյսմանախագիծ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Հայրապետյանի (նույնականացման քարտի համար՝ 000061176, տրված 22.11.2012 թ., 008-ի կողմից) որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ :

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<Սեյսմանախագիծ>> ՍՊԸ
ընկերության անվանումը

ք. Երևան, Բաբաջանյան 63, բն.3
ընկերության հասցեն

<<ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ, թիվ 2 մասնաճյուղ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

160630001073
ընկերության բանկային հաշվի համարը

01839944
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Ռիտա Հայրապետյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ <<Սեյսամնախագիծ>> ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ <<ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ, թիվ 2 մասնաճյուղ

5. Վճարողի հաշվի համարը՝ 160630001073

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 01839944

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827

10. Շահառուի բանկը՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900005000758

12. Գումարը թվերով և բառերով՝ 1899000 /մեկ միլիոն ութ հարյուր իննսունինը հազար/

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի ապահովում՝ տուժանքի ձևով

15. Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/2»

16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.